

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի երրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2021 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3284 թղթակցություն, առաքվել՝ 1980 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 2 . ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 117, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 284, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 388, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 782, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1097, գաղտնի թղթակցություն՝ 21. քաղաքացիներից՝ 592 դիմում;

ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 66 դիմում, որից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 47, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 13, հանրապետական գործադիր մարմիններից՝ 6:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

Ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն; Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ;

2021թ. երրորդ եռամսյակում կատարվել է 123 քաղաքացիների ընդունելություն;

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում;

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով;

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն;